№ 135 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22 **1894** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22 № 135

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱՊԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՌԱՋԻԿԱՅ **1895** ԹԻԱԿԱՆԻՆ

23-ՐԴ ՏԱՐԻ **„ՄՇԱԿ“** 23-ՐԴ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն գիրքով, նոյն պրոգրամայով և նոյն ուղղութեամբ։ Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՐԴԷՆ ՍԿՍՎԱԾ Է։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, կէս տարվանը՝ 6 ռուբլի, ամսական՝ 1 ռուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաղարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գիւղատնտեսական ընկերութիւն Երևանում.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. «Гражданинъ» լրագրի կարծիքը. Փողոցային տեսարաններ. Նամակ Զանգեզուրից. Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կ. Պոլսից ուղարկված մասնաժողովը. Լուրեր Կ. Պոլսից. Պարսկահայերի կեանքից. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թիւրքիայից.

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՒԱՆՈՒՄ

Անդրկովկասում ներկայումս կան երկու գիւղատնտեսական ընկերութիւններ, մէկը Թիֆլիսում, միւսը Քութայիսում։ Իսկ մի այնպիսի երկրագործական նահանգում, ինչպէս Երևանեանն է, որ ունի իր մէջ թէ հին կուլտուրայի հաստատ օրինակներ և թէ նոր արդիւնագործութեան փորձեր, չը կայ ոչ միայն գիւղատնտեսական ընկերութիւն, այլ և ուրիշ ոչ մի գիւղատնտեսական հաստատութիւն։

Մինչդեռ այդ նահանգը վաղուց սպասում է գիւղատնտեսութեան գործը ղեկավարող գործադիր մարմինների, ինչպէս օրինակ՝ գիւղատնտեսական ընկերութիւն, գիւղատնտեսական դպրոցներ, ֆերմաներ և փորձնական կայարաններ։

Երբ Երևանի նահանգում կը հաստատվի մի գիւղատնտեսական ընկերութիւն, այնտեղ ստիպմանաբար պահանջ առաջ կը գայ և ուրիշ բազմաթիւ գիւղատնտեսական հաստատութիւններ հիմնելու մասին։

Երևանում գիւղատնտեսական ընկերութիւն բանալը շատ հեշտ է, մի երկու շաբաթվայ գործ, որ չէ պահանջում ոչ նոր ծրագիրներ հնարել, ոչ երկար ու բարակ բանակցութիւններ սկսել։

Դրա համար բաւական է, որ մի 15—20 հոգի Երևանում անդամ գրվեն Կայսերական Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան և յետոյ նահանգապետի միջոցով խնդրեն, որ հաստատվի այդ ընկերութեան մի ճիւղը Երևանում ճիշդ այնպէս, ինչպէս նա բացված է Քութայիսում։

Այդ խնդիրը դեռ անցեալ տարի յարուցված էր Թիֆլիսի Կայսերական Գիւղատնտեսական ընկերութեան մէջ, որը մեծ համակրութեամբ է վերաբերվում դէպի ընկերութեան ճիւղերի բացմանալը։

Անցեալ տարի, երբ Երևանի նահանգապետ Ֆրեզէ գտնվում էր Թիֆլիսում, մենք առիթ ունեցանք խօսելու այդ առարկայի մասին։ Նահանգապետը մեծ համակրութեամբ վերաբերվեց այդ առաջարկութեան և միայն ցանկանում էր, որ ընկերութեան ճիւղը՝ բացվելու օրից՝ կարողանայ իսկոյն գործել արդիւնաւոր և լուրջ կերպով։

Այժմ երբ Երևանեան նահանգից լսվում են ձայներ այդպիսի ընկերութիւն հիմնելու մասին, այժմ երբ տեղացի գիւղատնտեսները ցանկութիւն են յայտնում գործել,—մնում է, որ թէ գիւղատնտեսները, թէ մեր երկրի գիւղատնտեսական զարգացման գործով հետաքրքրվող մարդիկ Երևանում միասին ժողովվեն, խորհրդակցեն և Երևանի նահանգապետի միջոցով խնդրեն կայսերական կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնից, որ նա բանայ Երևանում ընկերութեան ճիւղ։

Հաստատապէս կարելի է ասել, որ ընկերութեան խորհուրդը մեծ համակրութեամբ կը վերաբերվի այդ առաջարկութեան, և իր կողմից կաշխատի, որպէս զի աջողեցնի ընկերութեան ճիւղ բանալը Երևան քաղաքում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ГРАЖДАНИНЪ» ԼՐԱԳՐԻ ԿԱՐԾԻՔԸ

Պետերբուրգում հրատարակվող «Гражданинъ» լրագիրը, որի խմբագիրն է իշխան Մէշչէրսկի, Պետերբուրգի Թիւրքաց դեսպանի հերքումի առիթով ապել է մի առաջնորդող յօդուած, իր նոյեմբերի 12-ի համարում, որի մէջ հեգնում է Թիւրքաց կառավարութիւնը։ Յօդուածը սկսվում է այսպէս.

«Զար մարդիկ հնարել են, լրագիրները տարածել են, վրդովել են հասարակական կարծիքը և բռնկել է փոթորիկը։ Հիմա դուրս է գալիս, որ Փոքր Ասիայում իրանք հայերն են, որ կոտորում են իրանց։ Սուտ է, զրպարտութիւն է իբր թէ Թիւրքաց զօրքերը բռնաբարել են նրանց։ Թիւրքաց կառավարութիւնը զանազան ճանապարհներով, իր դեսպանութիւնների և կամ ուղղակի լրագիրներին արած հաղորդութիւնների միջոցով, հերքում է բոլոր այն լուրերը, որոնք երևացին գլխաւորապէս անգլիական մամուլի մէջ և առաջ բերին, ինչպէս յայտնի է ընթերցողներին, ոչ միայն Լօնդոնի հայ հայրենասիրական ընկերութեան դիմումը արտաքին գործերի մինիստր լորդ Կիմբերլէյին, այլ և անգլիական կառավարութեան ուղղակի Բ. Դրան արած պաշտօնական առաջարկութիւնները։

Audiatur et altera pars. Մեր լրագրում Փոքր Ասիայում կատարված արիւնահեղ դէպքերը մենք հաղորդել էինք անգլիական և ֆրանսիական աղբիւրների հիման վրա։ Ահա ինչ է տպագրում «հայկական գաղանութիւնների» մասին «Berliner Tageblatt» լրագիրը, փակագծերի մէջ նշանակելով՝ «Թրքական աղբիւրներին նայելով»։

«Гражданинъ»-ը բերում է լրագրի յօդուածը, որ մի և նոյն է, ինչ որ Պետերբուրգի Թիւրքաց դեսպանի հերքումը, որի թարգմանութիւնը տրվեց «Մշակի» մէջ և ապա աւելացնում է.

«Ցանկալի էր քննել և ստուգել այդ փոխադարձ մեղադրութիւնները, որոնց մէջ անկողմնակի կերպով խառնում են Ռուսաստանին։ Այդպէս և Պարիզի Թիւրքաց դեսպանութիւնը հաղորդում է լրագիրներին, թէ «անգլիական մամուլը յեղաշրջել է Սասունի դէպքերը. օտարերկրեայ հայերը միացել են ապստամբ քիւրդերի հետ և նրանց հետ միասին այրել և կողոպտել են մահմեդական գիւղերը. Թիւրքաց զօրքը կատարել է իր պարտքը»։

«Արդեօք տեղական ռուս հիւպատոսը չի օգնի իր անգլիացի պաշտօնակցին ստուգելու, թէ ով է այդտեղ գայլը, ով գառը»։

Եւ ճշմարիտ, կաւելացնենք մենք, ներկայ հանգամանքներում, ամենալաւ միջոցը—մի եւրոպական քննիչ յանձնաժողով ուղարկելն է։

ՓՈՂՈՑԱՅԻՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

Վերջին տարիներս Թիֆլիսում սաստիկ ծաղկել է... հայհոյելու արհեստը։ Շտապում ենք աւելացնել, որ մեր խօսքը փողոցի հայհոյանքի մասին է։ Շատ քիչ փողոց կը լինի Թիֆլիսում, որոնցով անցնելիս մարդ չը լսէ՝ օրվայ որ ժամին կուզէք՝ ամենաանպատկառ, ամենազզուելի հայհոյանքներ։ Բարձրաձայն և կոկորդը պատռելով ուղղում են միմեանց հացէին ամենալիրբ յիշողներ փոքրիկ, հազիւ դետնի երեսին երևացող մանկիկներ. հայհոյում են նոյն ձեռով և ամենաչնչին պատճառով՝ պատանիներ. հայհոյում են երիտասարդներ, հայհոյում մինչև իսկ ծերունիներ... Եւ փողոցային այդ խայտառակ կաղ ու կուում, այդ զզուելի հանդէսներում վերջին դերը չեն խաղում նաև մեր քաղաքի բոլոր աղգութիւններին պատկանող տարրական ուսումնարանների պատուելի սաները... Փողոցի զազիր կեանքը ի դերև է հանում ուսումնարանի և դաստիարակի ջանքերը և մատաղ սերունդը, դեռ ևս չը կերպարանաւորված, լող է տալիս այդ նեխած հոսանքում։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻԻՐՔԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, Նոյեմբերի 1-ին

Ազգային ժողովի գումարման և պատրիարքական ընտրութեան խնդիրները երկար ժամանակ քաշքշելէն, խաղցունելէն ետև, վերջապէս կառավարութիւնը և ապօրինի տեղապահ Դիմաքսեանը համաձայնութեան մը յանգեցան և ուրբաթ օր, ամսիս 4-ին, պիտի կայանայ խառն ժողով՝ զբաղուելու համար «ընտրական ժողովի» խնդրով և պատրիարքական ու վարչական ժողովներու ընտրութեան պատրաստութեամբ։

Այս ժողովը, որ այսուհետև պիտի կոչուի «ընտրական ժողով», առաջ ազգային ժողով, պիտի բաղկանայ ազգային ժողովոյ այն եկեղեցական և աշխարհական անդամներէն, որոնց համար կառավարութիւնը իր հաւանութիւնը տուած է։ Ընթերցողները կը յիշեն, որ ամիս մը առաջ կառավարութիւնը պատրիարքարանէն պահանջած էր ազգային ժողովոյ անդամներու անուանացուցակը։ Ահա այս ցանկէն կառավարութեան կողմէն ընտրուածները և ուրիշ քանի մը եկեղեցական և աշխարհական անձինքներու,—դարձեալ նախապէս կառավարութեան հաւանութիւնը այդ անձերու մասին ստանալով,—մասնակցութեամբ ժողովպիտի գումարուի և մէկ նիստի մէջ պիտի ընտրուի պատրիարք։ վարչական երկու ժողովների ընտրութիւնէն յետոյ պիտի լուծուի ընտրական ժողովը։

Ընտրական ժողովը պատրիարքի և վարչական ժողովներու ընտրութենէն դուրս ոչ մէկ խնդրով զբաղուելու իրաւունք պիտի չունենայ և ոչ ալ պատրիարքէն կամ վարչական ժողովներէն համարառութեան իրաւունք։ Պատրիարքը ոչ մէկ մարմնի պատասխանատու չէ և վարչական ժողովները պիտի ենթարկուին պատրիարքին և անոր կամքին։ Մէկ խօսքով պատրիարքը անկախ, ինքնուրոյն, ազատ և անպատասխանատու է և ուղածը կրնայ ընել։ Պատրիարքը պատասխանատու է միմիայն Թիւրք կառավարութեան։ Կը տեսնէք, որ այս ընտրական ժողովը ոչնչով չի նմանիր ազգային ժողովին։ Այսպէս, փոխանակ առաջ երթալու, ետ ետ կերթանք։

Այդ խմբակը, իրեն դլուխ ունենալով Դիմաքսեանը, ոչ միայն անձամբ, այլ և իրենց պնակալէշ, անխիղճ, հացկատակ արբանեակներու միջոցով կը ջանան ժողովուրդը պատրաստել, համոզել, որ ամենալաւագոյնն է համակերպիլ ապօրինի պահանջներուն և կերպով մը, ինչ ձեով կուզէ ըլլայ, անհրաժեշտ է, որ ըստ կարելոյն շուտ վերջ տրուի անիշխանութեանը, պատրիարք ընտրուի, որպէս զի խզուած յարաբերութիւնները հաստատուին և յետոյ ընտրուած պատրիարքը թող ջանայ և ազգային ժողովի թոյլտուութիւնը ստանայ։ Այդ վարձկանները կը պնդեն, որ այսպէս թէ այնպէս, մեզ հարկաւոր է պատրիարք մը ունենալ, որպէս զի բազմաթիւ՝ երեսի վրա, առկախ մնացած և կուտակուած խնդիրները իրենց լուծումը ստանան, կարգադրուին մէկ կողմէն, իսկ միւս կողմէն ալ կառավարութենէն ալ՝ հաշտ քաղաքականութեամբ սահմանադրութեան և ազգային թոյլտուութեան հրամանը ստանալ։ Ձեռք ընել, որովհետև տեղապահ մը չի կրնար ընել այն, ինչ կարող է ընել պատրիարք մը։ Եւ այդ մարդիկը կը յաջողին խաբել, մոլորեցնել, համոզել ոչ միայն տգէտ եկեղեցականներն ու աշխարհականները, այլ և քիչ շատ համոզումի տէր ունեցողները և նոյն իսկ անոնց, որոնք բոլորովին տարբեր կարծիք ունին այդ խնդրոյ մասին։

Եւ ժողովուրդը կը մոլորուի, կը խաբուի։ Այս պարագայի մէջ մեծ բան կրնար ընել այստեղի եկեղեցականութիւնը, բայց ոչինչ չընէր։ Հայ եկեղեցականութիւնը երբէք այն աստիճան բարոյական անկման, բարոյական կազմալուծեալ վիճակի հասած չէ եղեր, որչափ այժմ։ Ապօրինի պատրիարքական տեղապահի և ուրիշ բազմաթիւ պախարակելի ամենօրեայ դայթակղեցուցիչ դէպքեր կենդանի ապացոյցներ են մեր կղերի անկման և վատթարացման։

Ապօրինի կրօնական ժողովը իր ատենապետով յայտարարեց, որ պատրիարքական տեղապահի ընտրութենէն ետքը անպայման պիտի դադարի իր ապօրինաւոր պաշտօնավարութենէն, որպէս զի տեղապահը փութացնէ ազգային ժողովոյ գումարման, պատրիարքի և վարչական ժողովներու ընտրութեան խնդիրը, բայց անամօթաբար ստեց, որովհետև ոչ միայն տուած խոստումը չը կատարեց, չը հրաժարեցաւ, ոչ միայն նորէն շարունակեց իր ապօրինաւոր պաշտօնավարութիւնը, այլ և այնպիսի խնդիրներու ձեռք զարկաւ, այնպիսի խնդիրներով զբաղեցաւ, որոնցով զբաղվելու իրաւունք երբէք չունէր։

Ինչպէս իրաւունք չունի զբաղուելու և ընտրական ժողովի խնդրով, որը այս աւուր խառն նիստին Դիմաքսեանը պիտի առաջարկէ խառն ժողովին, ընդունուի և հետեւեալ օրը ձեռնարկուի պատրիարքի և վարչական ժողովներու ընտրութեանը։ Խառն ժողովը իրաւունք չունի այս ընտրական ժողովը ընդունել կամ չընդունել. այդ խառն ժողովոյ, թէկուզ այդ ժողովը օրինաւոր

[illegible]

[illegible]

ՖԱՎԱՍԾՊԵՂՈՆ ԿՈՄՈՂ

Ֆ. Ցոլոդրաանվ

[illegible]

Ամբարտավան կոչտորտ [illegible] [illegible] [illegible]

ընտրվեց Զարդեղեանց քահանան։ Քուէարկվեցան, բայց շատ քիչ ձայն ստանալով, չընտրվեցան՝ Ղէոնդ քահ. Խարազեանց, Սարգիս քահ. Աղաջանեանց և երկու զործակալները՝ Գիւտ քահ. Աղանեանց և Համազասպ քահ. Տէր Յովհաննիսեանց, որոնցից վերջին երկուսը՝ միայն 4 ձայն ստացան։

—

Այս օրերս Բաղուում լոյս տեսաւ Գրիգոր Արծրունու «Էվէլինա» էսիւդի ռուսերէն թարգմանութիւնը, որի մի օրինակը մենք ստացանք «Արօր» տպարանից, որի հրատարակութեամբ էլ լոյս է տեսել այդ գիրքը։ Թարգմանողն է Ա. Դաստակեան։ Պէտք է խոստովանել, որ «Արօր» տպարանի այդ հրատարակութիւնը ոչ թէ միայն գեղեցիկ է, այլ նոյն իսկ չքեղ։ Գիրքը տպված է ֆրանսիական հրատարակութիւնների ձևով՝ փոքր դիրքով, ամենալաւ թղթի վրա, և միանգամայն պատիւ է բերում տպարանին։ Գրքին կցած է Արծրունու պատկերը, թէև անաջող։ Անաջող է և գրքի սրբագրութիւնը, որի պատճառով գրքի մէջ տառասխալներ շատ են մտել, մանաւանդ ֆրանսիական բառերում։ Գրքի գինը նշանակած է 70 կոպէկ։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի առևտրական բանկի խորհուրդը, խորհրդակցական մի ժողովում, այդ բանկի Երևանի բաժնի կառավարչի պաշտօնի համար ընտրել է Երևանցի Ալէքսանդր Ղօրղանովին։ Ի դէպ. բանկի Երևանի ճիւղի կասսիրի պաշտօնի համար, ի միջի այլոց խնդիրը է տուել մանկավարժ Սեդրակ Մանդինեան։ Մանկավարժութիւնից՝ բանկի կասսիր,— որտեղից որտեղ։

—

Սրանից մի քանի ժամանակ առաջ, Պետերբուրգից մի պարոն, Միխայիլ Ֆեոդորով յայտարարեց, որ թոյլտուութիւն է ստացել հիմնելու 1895 թ-ի յունվարից հեռագրական գործակալութիւն։ Այժմ նոյն պարոնը յայտարարում է, թէ ի նկատի ունենալով, որ Պետերբուրգի լրագիրների ներկայացուցիչները որոշել են հիմնել հեռագրական գործակալութիւն, ինքը հրաժարվում է իր մտադրութիւնից, իր պարտքը համարելով, իբր մտաւոր ներկայացուցիչ, չը խանգարել լրագիրների ներկայացուցիչների ձեռնարկած գործը։ Ենթադրում ենք, որ այդ Ֆեոդորովը «Новое Время» լրագրի պատասխանատու խմբագիր Ֆեոդորովն է։

—

Դատաստանական պրակտիկային վերաբերեալ հարցերի և դատաստանական օրէնսդրութեան բարեփոխութեան հարցերի քննութեանը մասնակցելու համար Պետերբուրգում կը գումարվեն բոլոր դատաստանական պալատների աւագ նախագահները և պրօկուրօրները։ Խորհրդակցութիւնները կը կատարվեն արդարադատութեան մինիստրի ղեկավարութեամբ և մինիստրի օգնական Բուտովսկու, սենատոր Կոնիի և մի քանի ուրիշների գործակցութեամբ։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Լուր կայ, որ այստեղի թիւրքաց հիւպատոսը հեռագիր է ստացել այլ ևս ոչ մի հայի անցագիր չը տալ, ինչ գործով էլ գնալու լինեն թիւրքիա։ Մթթէ ճշմարիտ է»։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են. «Նոյեմբերի 13-ին, կիրակի օր, հայոց եկեղեցում պատարագիչ էր Թիֆլիսի թեմի առաջնորդ Սուրէնեան եպիսկոպոսը, որ եկել է այստեղ, ինչպէս ներկայացուցիչ հայոց Կաթողիկոսի կողմից, հանգուցեալ Կայսրի թաղմանը։ Եպիսկոպոսը չը կարողացաւ ժամանակին հասնել, այլ եկաւ թաղման հետևեալ օրը։ Պատարագին եկեղեցին լի էր։ Այստեղի եկեղեցու երգեցողութիւնը, որ անհամեմատ բարձր է այլ տեղերի երգեցողութիւնից, այդ օրը աւելի լաւ էր, շնորհիւ մեր տաղանդաւոր երգիչ Շահլամեանցի, որը solo էր երգում։ Եպիսկոպոսը պատարագի վերջը քարոզ խօսեց»։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Երեքշաբթի օր, ամսիս 15-ին, մեծ շքով տեղի ունեցաւ ամսիս 11-ին վախճանված փոխ-գնդապետ Եաղուբովի թաղումը։ Հանգուցեալը Ղուսարի Շիրվանսկի գնդի առաջին բատալիոնի հրամանատարն էր, որը մոտաւորապէս մի ամիս է, ինչ որ եկել է Ղուբա։ Դագաղը տանում էին Ղուսարի գնդի բոլոր բատալիոնների հրամանատարները, նոյնպէս և ամբողջ գնդի հրամանատարը, որը ներկայ էր թաղմանը։ Դագաղի ետևից գնում էին երկու վաշտ զինուորներ, երաժշտական խմբով։ Պատարագի արարողութիւնը կատարվեց Ղուբայի հայկական եկեղեցում։ Եկեղեցում ասեղ գցելու տեղ չը կար։ Գէորգ Եակովլևիչ Եաղուբովը բուն խաչմաղեցի էր (Ղուբայի գաւառ)։ Նա մասնակցել էր մի քանի պատերազմներում և վնասել էր իր ամբողջ աջ ձեռքը Խիվայի կռուում։ Համակրելի մարդ էր հանդուցեալը և նրա բնաւորութեան գլխաւոր յատկանիշներից մէկը այն էր, որ նա օգնութիւն էր ցոյց տալիս իր բոլոր չքաւոր ազգականներին»։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ. Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի վարչութիւնը խնդրում է մեզ տպել հետևեալը. «Վարչութիւնս պարտք է համարում յայտնելու ընթերցող հասարակութեան, որ Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան Ախալքալաքի ճիւղը ստացել է հետևեալ նուէրները. Յովհաննէս Սոմնջեանից՝ իր հանգուցեալ մօր յիշատակին—20 ր., Գ. Դարբինեանից և Լ. Տէր-Յովհաննիսեանից—20 ր., պատանի Թատերասէրներից՝—27 ր. 85 կոպ., Անյայտից—3 ր., ինժ. Արշակ Պիճիկեանից ի նպաստ վարչութեանս միջոցով հիմնվելի արհեստանոցին՝—10 բուբլի։ Թոյլ տուէք վարչութեանս «Մշակի» միջոցով յայտնելու իր խորին շնորհակալութիւնը այդ յարգելի պարոններին, նոյնպէս և Ղազանճեան ու Գրիգորեան եղբայրներին, որոնք խոստացել են նուիրելու վարչութեանս 25-ական բուբլի, առաջինները իրանց հանգուցեալ հօր, իսկ երկրորդները իրանց հանգուցեալ մօր յիշատակին»։

—

ԱՐԴՎԻՆԻՑ մեզ գրում են. «Հոկտեմբերի 9-ից, այստեղի ինտելիգենտ երիտասարդների աշխատանքով, բացվեց Արդուին քաղաքում հասարակական գրադարան-ընթերցարան։ Ուստի դիմում ենք հեղինակներին, խմբագիրներին, թարգմանիչներին և առհասարակ ցանկացողներին՝ օժանդակել նորաբաց գրադարանին գրքերով, պարբերական հրատարակութիւններով և այլ նուէրներով։ Ճանապարհածախսը հարկաւոր դէպքում գրադարանը վերցնում է իր վրա։ Նուէրները խնդրում ենք ուղարկել այս հասցէով։ Артвинъ, Բաղաքային ընթերցարան-գրադարանին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. ՊՕԼՍԻՑ ՈՒՂԱՐԿՎԱԾ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԸ

«Times» լրագրին Կ. Պոլսից հեռագրում են, որ սուլթանի կողմից նշանակված յանձնաժողովը, Սասունի արիւնահեղ անցքերը քննելու համար, արդէն ճանապարհ ընկաւ Կ. Պոլսից։ Անգլիական բոլոր լրագիրները լի են այն սարսափելի սպանութիւնների և գաղանութիւնների նկարագրութեամբ, որ թիւրքերը կատարել են փոքր-ասիական հայերի վերաբերմամբ։

ԼՈՒՐԵՐ Կ. ՊՕԼՍԻՑ

Մեր թղթակիցները հետևեալ քաղուածքներ է ուղարկել մեզ Կ. Պոլսի լրագիրներից։

«Թիւրք լրագիրներուն մէջ հրատարակուած պաշտօնական զեկուցում մը կիմացնէ թէ Սըվազի կուսակալութիւնը ծանուցած ըլլալով որ Տիվրիկի գաւառակին մէջ երեսն ելած հայ աւազակները հալածուած և Արաբկիր (Մամուրէթ-իւլ-Ազիզի նահանգ) անցնելով հոն պահուրտած են, ներքին գործերու նախարարութիւնը այդ աւազակներուն ձերբակալման մասին հարկ եղած հրամանը հեռագրեր է Մամուրէթ-իւլ-Ազիզի կուսակալութեան»։

«Սըվազի կուսակալ խալիլ պէյ, որ քննական պատոյտի ելած է, թոքատ ժամաներ է»։

«Խարբերդի կուսակալ Էնիս փաշա, որ քննական պատոյտի ելած ըլլալով մէկ քանի օրէ ի վեր Արաբկիր կը գտնուէր, ճանբայ ելեր է Ակն երթալու համար։

«Մոնիդեօռ» կիմանայ թէ սուլթանը ամսական 5000 ղրուշ յատկացնել տուած է յունաց նախորդ պատրիարք Նէոֆիթոսի»։

«Առանայէն կը զրեն թէ Էնաէրին գաւառակի Կէգան գիւղէն եօթ հոգի, որոնք Առանայի մէջ աշխատելէ ետքը, իրենց տեղը կը վերադառնային, հոկտեմբերի 7-ին ուրբաթ գիշերը Գարս գաւառակէն չորս ժամ հեռուն գտնուած Մէօհիւրլիւ գիւղին մօտ ծառի մը տակ նստած ատենին կայծակ իջնելով՝ դրանցից հինգ հոգի կայծակնահար մեռեր են իրենց քով գտնուած ձիով ու էշով մը։ Ազատուածները զգայազուրկ վիճակի մէջ իրենց գիւղերը զրկուեր են»։

ՊԱՐՍԿԱՀԱՅԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

Թէհրանի «Շաւիզ» շաբաթաթերթում կարդում ենք.

«Հաստատ աղբիւրներից լսում ենք, որ Մարաղայում մի հայ երիտասարդ իր մօտիկ ազգական մի օրիորդի հետ ամուսնացել է պարսիկ հոգևորականի քաբինով մի քանի տեղացիների միջնորդութեամբ, որովհետև հայ քահանան չէ ուզել պսակել չհասութեան պատճառով, վախենալով իրանից բարձր իշխանութիւնից»։

«Սալմաստից սկսած մինչև Մակու, սահմանին մօտիկ գտնված գիւղերը քանի գնում է դատարկվում են քիւրդ հրոսակների աւարառութիւնների պատճառով։ Այդ քիւրդերը այս օրերս անցնելով սահմանը՝ թալանել են Թաղէոս առաքեալի վանքը և վանքապատկան գիւղը, որի վանահայրը, ինչպէս լսում ենք, հեռագրել է Էջմիածին, իսկ այնտեղից էլ հեռագրված է մեր առաջնորդին, որ դիմէ ուր որ հարկն է։»

«Թաւրիզից գրում են. «Ցասը հոգի սավրացիներ իրանց քահանայի հետ, եկել են Թաւրիզ, բողոքելու՝ իրանց նոր աղայի ձեռքից, որը կամենում է մինչև հիմի ստացած տուրքի տեղ կրկինը ստանալ, և մինչև հիմա 500 թուման տուգանք է առել գիւղացիներից, այն ինչ գիւղի գնելը ընդամենը չը կայ երկու ամիս։»

«Խոյից գրում են. «Յաւով պէտք է յայտնեմ այս օրերս տեղի ունեցած մի եղեռնագործութիւն, որ կատարվեցաւ տեղիս վառ գիւղի ուսուցչի ձեռքով։ Այդ ուսուցիչը՝ որ ահա վեց ամիս էր իր պաշտօնի գլուխն էր անցել, իր տէր թողիկական մանկավարժութիւնը ոչ մի կերպով չը կարողանալով առաջ տանել, դիմել էր խալիֆայական մեթոդին—բարկանալով մի տասներկու տարեկան աշակերտի վրա, ականջից բռնել և այնպէս ուժգին խփել էր պատին, որ գանգը վնասվելով չը քաշեց երկու չաբաթ, խեղճը մեռաւ չարաչար մահվամբ։ Եւ այդ ուսուցիչը, լսում ենք, գնում է վարդապետ ձեռնադրվելու։ Այստեղ, ինչպէս և ամբողջ Ատրպատականում, այս տարի ամեն ինչ թանգ է։»

«Թաւրիզից չարունակ մեզ հաղորդած լուրերից երևում է, որ Ատրպատականի սրբազան առաջնորդը, երեսի վրա թողնելով ազգային ամեն գործեր, խիստ զբաղված է կուսակցական խնդիրներով»։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Կ. Պոլիս, Նոյեմբերի 14-ին

Շտապում ենք հաղորդել ձեզ այն պաշտօնական զեկուցումը, որ կառավարութիւնը հրատարակեց Սասունի դէպքերի առիթով։ Կարդացէք և եզրակացութիւնը ինքներդ հանեցէք։

«Պաշտօնական զեկուցում. Վերջերս Եւրոպայի լրագիրներէն մէկ քանիները հրատարակեցին ճշմարտութեան հակառակ լուր մը Սասունի մէջ օսմանեան զօրքերուն կողմէ քանի մը հայ գիւղերու քանդուած և այդ միջոցին ալ մարդու սպանութիւն կատարած ըլլալը։ Անոնցմէ ոմանք ալ այս լուրը մեծցնելով ըսած են թէ ասոր մինչև հիմա Եւրոպա չիմացուած ըլլալը առաջ եկած է Սասունէն մեկնիլ ուզող ճամբորդներու դէմ դրուած արգելքէն։

«Սասունի բնակող կայսերական հպատակները առաջուան պէս կատարեալ խաղաղութեան և հանդարտութեան մէջ ըլլալով գործերուն զբաղած են, և ակներև է թէ ճամբորդները կատարեալ ապահովութեամբ ուզած տեղերին կերթեկեն։ Միայն թէ որովհետև կարգ մը հայ աւազակներ խաբուելով խռովարարներուն թելադրութենէն անցեալները Թալորիի և անոր մերձակայ տեղերուն մէջ համարձակած էին մարդ սպանել, աւար առնել, կողոպտել, թալել, ճամբայ խափանել և այդ կարգի ապահովութիւն և հանդարտութիւնը վերցնող աւազակային գործեր ընել, կառավարութիւնը այս խռովութիւնը զսպելու համար բնականաբար ձեռք առաւ հարկ եղած միջոցները, չորրորդ զօրաբանակէն պէտք եղած թուով զինուոր զրկուեցաւ և այսպէս խռովութեան առաջքն առնուեցաւ։ Հանդարտութիւնը վերահաստատված ըլլալով, զինուորներն ալ ետ զրկուեր են իրենց տեղերը։

«Չորրորդ զօրաբանակին մի չիւրին և Պիթլիսի կուսակալին կողմէ ծանուցած է թէ քիւրտերը այս առթիւ միջամտութիւն մը գործած չեն և թէ, ինչպէս վերը ըսուեցաւ, մէկ քանի հայ աւազակներ անվայել ընթացքի մէջ գտնուած են։

«Որպէս զի քննութիւն մը կատարվի վերոյիշեալ աւազակներու այս ապատակութեանց վրա, կազմուած է մասնախումբ մը զոր կը կազմեն կայսերական թիկնապահ Ֆէրիդ Ապտուլլահ փաշայ, Պօլսոյ Էնիէա Սանտըղիի տնօրէն Էմէր-բէյ, ներքին գործոց նախարարութեան թղթակցութեան գիւանին առաջին քարտուղար Մէհմետ էֆէնտի, և կայսերական անձնական սպայակոյտին Միրլիվա Հաֆըզ Թէվֆիգ փաշա։ Այս մասնախումբը այս շաբթուան մէջ ճանբայ ելլելիք չոգենաւով պիտի մեկնի։

«Կառավարութիւնը իր արդարութեան և գթութեան հովանիին տակ հաւասարաբար պաշտպանած հպատակներուն նկատմամբ բնաւ երբէք պատշաճ չի կրնար գտնել վերոյիշեալ լրագիրներուն հրատարակածին նման դէպքեր, և ճշմարտութիւնը այսպէս յայտնելով, կը հերքէ այդ հրատարակութիւնները»։

Այդ մտքով պաշտօնական շրջաբերականներ զրկված են եւրոպական պետութիւններին։

Սակայն ով կը հաւատայ։

Պ—ի.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ Պոլսից հաղորդում են, որ Բ. Դուռը ընդունել է յունաց տիեզերական պատրիարքի հրաժարականը։

—Վիէննայից հեռագրում են, որ Ֆրանց Կոչուտ ընդունել է ունգարական հպատակութիւնը։

—Եւրոպական լրագիրները տեղեկութիւն են ստացել կենտրոնական Չինաստանից, որ քրիստոնեաները այնտեղ ամենախիստ հալածանքի են ենթարկվում։ Չինացիները կոտորել են բազմաթիւ քրիստոնեաներին։

—Բերլինից հեռագրում են, որ չինացիները ապստամբվել են Իչլէում և սպառնում են կայսերական պալատին։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 Նոյեմբերի։ Մինիստրների մասնաժողովը որոշեց. 1894 թ-ի սեպտեմբերի 1-ից արտասահման արտահանվող չաքարի, չաքարաւազի և բաֆինադի համար 1 ր. 75 կոպէկ ակցիզը պուդից վերադարձվում է, եթէ չաքարը անմիջապէս գործատներից է դուրս թողված և ակցիզային վերահսկողութիւնը վկայում է, որ այդ չաքարի վրա յայտնի չափով ակցիզ է զբրված. իսկ այն չաքարի համար, որը ակցիզային վկայութիւն չունի, արտասահման տանելու ժամանակ, վերադարձվում է՝ չաքարաւազի համար 1 ր. պուդից, բաֆինադի համար—1 բուբլի 40 կոպէկ։

ՎԱՐՇԻՆ, 18 Նոյեմբերի։ Այսօր առաւօտ վախճանվեց իշխան Բիսմարկի ամուսինը։ Թաղման օրվայ մասին դեռ ոչինչ յայտնի չէ։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ, 15 Նոյեմբերի։ Բոգդիխանի հրովարտակով, Լի Խունգ-Զանգ զրկված է բոլոր աստիճաններից, սակայն նրան թոյլ է տրված մնալ իր պաշտօնում։

ՊԱՐԻԶ, 19 Նոյեմբերի։ Այսօր կալանաւորված է, շանտաժին մասնակցելու համար, «Paix» լրագրի նախկին ադմինիստրատոր Տրոտար և բարոն Հէֆֆէլէր։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 Նոյեմբերի։ Բարձրագոյն ուկազներով կարգադրված է տօնել Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէոդորովնայի ծննդեան օրը մայիսի 25-ին, անուանակոչութեան օրը—ապրիլի 23-ին. Թագաժառանգ Ցէսարէվիչ Գէորգի Ալէքսանդրովիչի ծննդեան օրը—ապրիլի 27-ին, անուանակոչութեան օրը—Նոյեմբերի 26-ին։

Բժշկապետ Բէրտէնսոն ճանապարհ ընկաւ դէպի Սան-Ռէմօ կօնսիլիումի համար Մեծ Իշխան Ալէքսի Միխայլովիչի մօտ։

Պետերբուրգի ուսումնարանական շրջանի հոգաբարձու կապուստին ճանապարհ ընկաւ դէպի Աբասթուման։

ՊԱՐԻԶ, 19 Նոյեմբերի։ Շանտաժներին վերաբերեալ գործի առիթով այսօր տեղի կունենան նոր կալանաւորումներ. ասում են, շատ կասկածի տակ են ընկած զանազան լրագիրների դի-

բեկտորներ և ներքին գործերի մինիստրութեան բարձր պաշտօնեաներից մէկը։

ԼԱՀՈՐ, 19 Նոյեմբերի։ Փոխարքան այսօր նախագահում էր Պէնջաբի աւագների մեծ դուրբարին. ներկայ էին 1200 անձինք։ Փոխարքան ասեց, որ հնդկական կառավարութիւնը չէ ձգտում որ և է նոր նուաճումների, այլ խաղաղութիւն է ցանկանում։ Լորդ Ռոզբէրիի ճառից յետոյ կատարելապէս կարելի է յուսալ, որ կը գայ ժամանակ, երբ ռուսաց և բրիտանական շահերից ծագած ամէն տեսակ վտանգները կը վերացվեն։

ԼՕՆԴՕՆ, 19 Նոյեմբերի։ Եգիպտոսի, ըստ երևոյթին, վճռեց չարունակել պատերազմը և արդէն պատրաստութիւններ է տեսնում ձմերային արշաւանքի համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 Նոյեմբերի։ Այսօր ճանապարհ ընկաւ դէպի արտասահման յունաց թագաւորը իր ամուսնու և որդու հետ, Դանիայի թագաւորը իր որդու հետ, Ուէլսի և Եորկի պրինցները։ Ճանապարհ ընկնող օդաստափառ անձանց ճանապարհ գցեցին թագաւոր կայսրը, թագուհի կայսրուհին և կայսերական Ընտանիքի Անդամները։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։

Դ. Գ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեարդային հ.

Կ. Դ. ՐՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխաների և կանանց հ.

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—11—12 ժ. կանանց հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—11—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—7½ ականջի, կոկորդի, քթի և նեարդային հ. երկուչաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խիպ, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) դ օպերացիայի համար առանձին։ Հիւանդանոցումը ընդունվում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
ժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ։ (№ 72)

ԱՄԵՆԱՅԱՅՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՐՕՅԱԼՆԵՐ

ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

ՖԻՍ-ՀԱՐՄՕՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ։ ԿԻԹԱՌՆԵՐ, ՖԼԷՅՏԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՁԱՅՆԱԽԱՋԵՐ, ԼԱՐԵՐ ԵՒ ԱՅԼՆ։ ԵՒ ԱՅԼՆ։

Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս։

ՆՈՐ-ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՏՆ
ուղարկվում է ձրի։
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱԽԱՋԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ

ԴԷՊՕ
Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Մատակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան

Тифлисъ, Музыкальное депо Б. М. Мириманіана, Дворцовая ул., д. Т. Д. З. Банка.

(№ 35) 17—20

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառւում է, Թիֆլիս, կենտրօնական գրավաճառանոցումը։

ԳԱԲՐԻԷԼ ԱՌԱՔԵԼԵԱՆԻ

«ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՏԱՐԱԿՈՒՍԱՆՔՆԵՐ»

Մի երես եկեղեցական իրաւաբանութիւնից. Բ. 1894 գինը 50 կ. Ճանապարհածախս 15 կոպէկ։

(№ 127) 5—5

ՀԵՌԱԽՕՍ № 104 ՀԵՌԱԽՕՍ № 104

Մ. Բ. ՍԱՓԱՐԵԱՆԻ

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

որը, բացի բազմաթիւ բարձր շքանշանների, արժանացած է նաև ներկայ 1894 թուին ՈՍԿԷ ՄԵԴԱԼԻ—Անտվերպէնի, և ԲԱՐՁՐ ՊԱՏԻԱՒՈՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ—Լիսի ցուցահանդէսներում

Առաջարկում է նոր պատրաստած

ԸՆՏԻՐ ՊԱՊԻՐՕՍՆԵՐ

„Капризъ“.	25 հատը 15 կոպ.
„Рекомендаціонныя“ . . . . „Театральныя“. . . . . „Флора“.	10 հատը 5 կոպ.
„Экономныя“	10 հատը 3 կոպ.

Կարելի է առնել գործարանից և իսկական ծխախոտավաճառների մօտ։
Ուղարկելու ծախսը գործարանի վրա է։ (№ 104) 0—21



Ա. ԿՕՊՊԻ
ՖՕՐՏԷՊԻԱՆՆԵՐԻ
ԹԱՆՈՒԹՈՒՄ

(Միքայէլեան փողոց, № 132)

կան մեծ քանակութեամբ նոր դաշնամուրներ, 350 ռուբլուց մինչև 450 ռուբլի արժողութեամբ։
(№ 119) 10—25

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

Ընդունում է երթևեկներ, կիսագիշերօթիկներ և գիշերօթիկներ։ Սօլօլակ, Գանօվկայա փ. № 11. (№ 127) 8—10

Ազգիս վեհափառ Հայրապետը հրամայել է գործադրել հայկական դպրոցներում, որպէս ձեռնարկ Սարգիս քահանայ Բէգնազարեանցի աշխատասիրած

«ՀԱՄԱՌՕՏ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔԸ»։

Ցայտնելով այս ի գիտութիւն դպրոցական վարչութեանց՝ խնդրում ենք ցանկացողներին առ այժմ դիմել ուղղակի այս հասցէով. Թիֆլիս, Ելիզաւէտեան փողոց, տուն № 45, աշխատասիրողի այրին։

Գիրքը կազմած է և արժէ՝ 1) հատով գնողներին 60 կ., 2) տասնից մինչև յիսուն գնողներին 55 կ., 3) յիսունից մինչև հարիւր գնողին 50 կ., 4) դպրոցական վարչութիւնից վկայված չքաւոր աշակերտներն ու աշակերտուհիները կարող են վճարել 40 կ.։ Ճանապարհածախսը գնողների վրա է։

24—25 (№ 81

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԻ

31-ն Նոյեմբերի 1894

ՊԱՀԱՆՋՔ	Թիֆլիսում	Բագուի և Batումի բաժն.	Ընդամենը
1. Դրամարկղ (առձեռն թղթադրամ)	141 007—65	153,256—52	294,264—17
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկ. բաժնում.	72,000 —	546 000 —	618,200 —
3. Զեղչ. (Disconto) մուրհ. երկու ստորագրութ.	3,369,230—98	1,146 247—13	4 515 478—11
4. Զեղչ. մուրհ. մի ստոր. ապահ. տոկոս. թղթ.	35,000 —	— —	35 000 —
5. Զեղչումն տոկոսաբեր թղթ., կարճն. և այլն.	40,586—12	8,875—50	49,461—62
6. Փոխառութիւն գրաւականով՝			
ա) Պետութիւնից ապահ. տոկոսաբ. թղթերի.	1 497,427—39	571,795—75	2 069 223—14
բ) » ոչ ապահ. » »	237,724 —	14 445 —	252,169 —
գ) ապրանքների	40,786 —	267 412 —	308,198 —
դ) Ոսկւոյ և արծաթի	— —	5,861—52	5,861—52
7. Բանկի պատկանեալ տոկոսաբեր թղթեր.	844,368—35	56,258—69	900 647—04
8. Տոկոսաբեր թղթեր պահեստի դրամագլխի	232,583—78	— —	232,583—78
9. Ոսկի և արտասահմանի փոխանակագրեր	68 349—75	20,761—46	89 111—21
10. Թղթակիցներ՝			
ա) Նոցա հաշիւը (Loro)	12 817,818—42	— —	12 817,818—42
բ) Բանկի հաշիւը (Nostro)	11,746,279—26	— —	11,746,279—26
11. Բաժինների հաշիւը կենտր. վարչ. հետ	1,466 862—39	— —	1,466,862—39
Կենտրօնական վարչութեան հաշիւը բաժինների հետ	— —	1,350,839—62	1,350 839—62
12. Գնումն և վաճառ. արժեթղթ ըստ յանձնար.	139,400 —	— —	139,400 —
13. Պայմանաժամն անցուցած փոխառութիւն.	34,045 —	11 605 —	45,650 —
14. Բողոքված մուրհակներ	12 880 —	3,987—65	16,867—65
15. Ընթացիկ ծախսեր	51,101—17	30 024—97	81,126—14
16. Կանկարասիք և սկզբնական ծախսեր	3,423—96	2,785—36	6,209—32
17. Յետ ստացուելիք ծախսեր	14,104—45	4 533—73	18 638—18
18. Անշարժ կալուածք	— —	48,622—65	48,622—65
Ր. Ա.	32,864,998—67	4,243,512—55	37 108,511—22

ՊԱՐՏՔ	Թիֆլիսում	Բագուի և Batումի բաժն.	Ընդամենը
1. Հիմնական դրամագլուխ	1,000,000 —	— —	1,000,000 —
2. Պահեստի դրամագլուխ	232,636—55	— —	232,636—55
3. Դրամական աւանդներ՝			
ա) Պայմանաժամով	3,649,576 —	653,494 —	4 303,070 —
բ) ց'Պահանջ.	262 617 —	97,005 —	359,622 —
գ) Ընթացիկ հաշուով հասարակ.	1 009,130—18	1.503,760—91	2,512,891—09
դ) » » պայմանաւոր.	— —	321,278—57	321,278—57
4. Մասնաւոր հաշիւ պետ. բանկայի Թիֆլ. բաժն. ապահովված մուրհակներով	105,000 —	— —	105,000 —
5. Վերազեղչումն մուրհակների պետական բանկի Թիֆլիսի բաժնի	312,119—90	— —	312,119—90
6. Թղթակիցներ՝	— —	— —	— —
ա) Նոցա հաշիւը (Loro)	12,596,288—25	— —	12,596,288—25
բ) Բանկի հաշիւը (Nostro)	11 996 322—03	— —	11,996,322—03
7. Բաժինների հաշիւը կենտ. վարչութ. հետ.	— —	1,464,710—01	1,464,710—01
Կենտրօն. վարչութ. հաշիւը բաժին. հետ.	1,330,109—08	— —	1,330,109—08
8. Բանկի բաժնետոմսերու անվճար կտրօնների բաշխը	6,223—32	— —	6 223—32
9. Չը վճարուած տոկոսներ, աւանդների, ընթացիկ հաշիւների և այլ գործողութեանց	105 863—60	36,422—34	142,275—94
10. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ	216,550—17	132,256—78	348,806—95
11. Փոխանցիկ գումարներ	42,562—59	34,594—94	77,157—53
12. Բողոքված մուրհակները	— —	— —	— —
13. Արդիւնք 1893 թ.	— —	— —	— —
Ր. Ա.	32,864,998—67	4,243,512—55	37,108,511—22

Дозволено цензурою, Тифлисъ, 21 Ноября 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.